

ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար


Տարեկան ծրք 10

Վեցամսեայ » 5

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԳԻՍ



ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան ծրանք 12

Վեցամսեայ » 6

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԳԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հաքաք օրերը : Մա-
նուցման տողը 10 Սանդիս : Երկու քիւ ա-
նաջ հրատարակուած քերքը 40 Սանդիս :
Չհրատարակուած գրութիւնը եւ յօրուի :

Հասցե
DI AN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

Ապուլ և Եստուճոյ սիրուն լոկեր, սա
պատին քրոյի շուքը օր առօրեայ թաղանթին է :



ԱԶԳԱՅԻՆ

Կը լսենք թէ Տիարք Գայանան եւ
Շահվէքիւկան գաղիական բարեգործա-
կան ընկերութեան մը կողմէ տրուելիք
նպաստովը Վառնայի մէջ պիտի բանան
վարժարան մը, ուր ձրիաբար պիտի
ընդունուին ուսանողք :

Անցեալ կիրակի զարմանօք տե-
սանք որ՝ աշկերթի վերադառնալովս
ի պաշտօն եկեղեցականութեան : Մինչ
մենք կը պատրաստուէինք մեր գոհու-
նակութիւնը յայտնել թաղ խորհուրդի
այն միաձայն որոշման վրայ, որուն
համեմատ այսուհետեւ ամեն կիրակի,
խորհուրդը իր ներաշայջուցիչը կամ իր
կողմէ կարգեալ եկեղեցականներ պիտի
ունենար կանոնաւորապէս բանկալին
մէջ, անցեալ կիրակի այս տեսարանը
մեզի խիստ անբացատրելի առեղծուած
մը թուեցաւ. ի՞նչ եղաւ յանկարծ որ,
խորհուրդին որոշումը մէկ օրուան կեանք
ունեցաւ ու այդ դեռատի պատանին
դարձեալ անցաւ իր պաշտօնին գլուխը :

Արդեօք Պատ. խորհուրդը իս-
թըր-կէօնիւ ըսուած անբուժելի ախտէն
բուժուած է : Չենք կարծեր : Միայն,
չատերուն հետ կը կրկնենք ու կ'ուզենք
որ այդ պարունին տեղ, ուրիշ տեղեր
եղածին պէս, թաղ. խորհուրդը կողմէ
կարգեալ եկեղեցական մասնաժողովի մը
յանձնուի բանկալի գրամական կարեւոր
գործին տնտեսութիւնը, գիտնալով որ
եթէ հոն ժողովրդեան համակրանքը
վայելող պատկառելի անձնաւորութիւն-

ներ գտնուին, թէ՛ խորհուրդին արժանապատուութիւնը պահուած կըլլայ և թէ հասոյթները քիչ մը աւելի համամատուցութիւն կը ստանան:

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Կ. Պոլսէ կը գրեն.

«Մէկ քանի ամիսներէ ի վեր կըրկնուելու վրայ եզոյ երկրաշարժի ցնցումներէն ամեն ազգի ժողովուրդ վախի մէջ է, մանաւանդ ներկայ ձմրան սաստկացած պահուն: Անցեալ շաբաթ իրիկուն, Յնվր. 17. ժամը 10ին, (ը. թ.) մայրաքաղաքիս մէջ չորս անգամ բաւական զօրաւոր ցնցումներ զգացուեցան: Երկուշաբթի օրը հրատարակուած լրագիրք ծանուցին թէ, նոյն շաբաթ օրը միւսնոյն ժամուն երկրաշարժի ցնցումներ զգացուեր են նաեւ Եֆէնի շէհիրի, Իզմիրի, Պրուսայի, Իզմիրի և Մանիսայի մէջ: Այս տեղերէ մեծ մասին մէջ ցրնցմունք 20-25 երկվայրկեան տեւեր են: Հռոդոսի մէջ շէնքեր ճեղքուեր են, բայց մարգու կորուստ չէ պատահեր »:

ՏԱՐԱԳՐՈՒ ԴԻՒՆ


Յաւօք սրտի իմացանք թէ, «Իրաւունք» լրագրոյ խմբագիրներէն Տ. Յ. Ղուրպէթեան և Արևելեան տպարանի տէր Տ. Օննիկ Բարսեղեան, չորեքշաբթի իրիկուն Ռուսական շոգենաւով Օտեսա տարագրուած են:

Այս տարագրութեան պատճառը ինչ որ ալ եղած ըլլայ, ասդին անպաշտպան թողուած երկու ընտանիքներու ապրուստի հոգը մտածելը եթէ ոչ ազգային՝ գէթ մարդկային պարտականութեան վսեմագոյններէն չի՞ համարուիր: Ուստի կառաւարկենք որ խղճի տէր անձնաւորութիւնք ձեռնբերեց լինին այդ

երկու դժբախտ ընտանիքներն քիչ չառ սիրտիւ նիւթական նպաստուք:

Տեսնենք ո՞վ պիտի ունենայ այսպիսի ազնիւ գործի մը նախաձեռնութիւնը:

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն



ԱՂԲԱՏ ԸՆԿ. ՆՊԱՍՏԸ

Երեքշաբթի գիշեր, Անկէլ Սլավօվի սրահին մէջ սովորական շքով տեղի ունեցաւ Աղբատ. Ընկերութեան թատերական ներկայացում, ի ներկայութեան ընտրեւագոյն բողմութեան մը:

Ընտրուած խաղն էր «Խաղացողին կենաց 30 տարին» կամ «Չար ընկերին յուրի ազգեցութիւնը», որ, իբրեւ ընկերական խիստ կարեւոր երեւոյթ մը շոշափող նիւթ, թէեւ զուրկ էր կարգ մը կնճոռտ հանգոյցներէ, որոնք աւելի մեծ շահեկանութիւն մը կրնձայեն խաղին, բաւական եղաւ սակայն յուզելու սրտերը ու արցունքներ խրելու հանգիստականներու աչքերէն:

Խաղին հերոսներն էին Ճիօրճիօ (Պ. Պէնլեան) և ընկերը Վարնէր (Պ. Պապուեան), հարստանալու խօլ ըղձանքէն մոլորած երկու խաղամու ընկերներ, որոնք մինչեւ վերջը դնահատելի յաջողակութեամբ կատարեցին իրենց գերերը: Մանաւանդ վերջին արարուածը ամենամեծ յաջողութիւն մը եղաւ. Ճիօրճիօ, իր ճոխ ու մեծափարթամ կենցաղէն յանկարծ մերկացած, թշուառութեան ու չքաւորութեան պիւր ճանկերուն մէջ ոգորուն, անօթութենէ ու տառապանքէ կմախացած դէմքին վրայ կրելով՝ գարշելի անցեալի մը բոլոր դառնութիւնները, անհուն սոսկումով ու պժգանքով կը տեսներ իր խաղի ընկերը, Վարնէր, որ, իր ցնցոտիներուն մէջ պարուրուած, ահարկու օձի մը պէս կը սողոսկէր իր խարխաւ հիւղակէն ներս: Խաղամուղութեան կամաւոր զոհերու տիպարներ, որոնք սրտին մէջ գեռ չէր մը

տած սակայն տպաշաւի զգացումը, իրենց հարստութեան օրըստօրէական փճացման քայլ առ քայլ հետեւած, անոր արհաւիրքին բոլոր սարսուռովը տողորուն, դեռ աւիթ կը փնտռէին սակայն նոր կողոպուտով մը վերադառնալու իրենց անցեալ մեծածոխ կեանքին:

Օրիորդ քնար ևս, իր Ամէլիի դերին մէջ, ամենամեծ եռանդով ընդգրկեց իր համակերպող ամուսնի դերը, մանաւանդ վերջին արարուածին մէջ, ուր կատարեալ ճշտութեամբ մարմնաւորեց որդեկորոյս մօր մը վեհ ու ազնիւարշ սկստկերը, իր թաւկատիպ այտերուն վրայ յայտնապէս ցոլացնելով վշտաշարժար հոգիի մը բոլոր տառապանքները: Միւս գերակատարներն ևս առհասարակ լաւ կատարեցին իրենց երկրորդական դերերը:

Խաղն վերջացաւ: զաւեշտով մը, որ քրքիչներու եւ ծափահարութեանց անվերջ տարափի մը մէջանդ ուժասպառ ըրաւ բոլոր հանդիսականները:

Ցաւ է մեզ ըսել սակայն թէ, հակառակ Աղբատախնամի վարչութեան անդուլ ճիգերուն, ու հակառակ նոյն իսկ այն սրցունքոտ հրաւերին, որ այնքան սրտաճմլիկ կերպով կը նկարագրէր մերագնեայ եղբարց սառապագին կացութիւնը, Վառնայի հայ հասարակութեան մեծագոյն մասը չէր ուզած քաջալերել այն մարդասիրական ձեռնարկը: Բազմաթիւ բարեկեցիկ ընտանիքներ, կարգ մը անիմաստ պատրուակներով, մերժած էին նպաստի առաջարկութիւնը, ու միայն բանի մը ծանօթ ընտանիքներ, իրենց առաքինական բարի սովորութեան համաձայն, փութացած էին քաջալերել ընկերութիւնը: Այսու հանդերձ, արդիւնքը բաւական գոհացուցիչ է եղած, երեք հարիւր Փրանքի չափ գումար մը, որ ամիս մը ևս կրնայ բաւել բազմակարօտ գաղթականութեան մը բազմապիսի պէտքերուն:

ՀԱՅԷՆ

Վաղը գիշեր Անկէլ Սլափօլի թատերասրահին մէջ Վէսէլօ հայ թատերախմբին կողմէ պիտի ներկայացուի «Վէլի պապա» անուն 3 արարուած խիստ ծիծաղաշարժ կատակախաղը ինչպէս նաեւ զաւեշտ մը:

ՆՄՈՅՇ ՄԸ

Ռուսահայ գրական բարբերէն

Նոր—Դարի մէջ կը կարդանք:

«Քալանթար և ընկերութեան (Մըշալ) հասցին»

«Փողոցային թերթի մարդկանց ստիպուած ենք իրենց լեզուով տալ մեր պատասխանը»

«Ողորմելիներ, Ձեզ վրայ, Ձեր ճակատին էն գլխից թքել ենք մենք և թուքն էլ ավտոսացել»:

«Սա ոչ ֆէյլէտոն է, ոչ կատակ և ոչ էլ նոր տարուայ շնորհաւոյանք, այլ իրողութիւն»:

Բոժոժիկ — Ուրեմն հայհոյիչի Ա. կարգի սե ժապաւէնը կը տրուի Մշակի և Նոր—Դարի խմբագրութեանց:

ԾԱՆՈԹՈՒԹԱՒ ՄԸ

Գուրուչայի գիւղախմբին հայաբընակ հասան—Օվա գիւղի քահանան ասկէց տաան և ութ տարի առաջ եկեղեցւոյ մէջ հետեւեալ ծանուցումը ըրած է.

«Ժողովուրդ Աստծու Ալիշան պէկը աս տարի Խաչանի տեղ գիւղէն վեց հաա էշ կուզէ, վաղը ադ էշերը խրկել պէտք է էշ մը Բառնաբասը, էշ մը Մարուգէն, էշ մը Աղաճանը, երկու էշ Խաչուկ քէհեան, էշ մըն ալ ես է՛յ, ընտո՞ր է, կը յօժարի՞ք:


Խաչուկ քէհեան — Տէր պապա, դուն որ յանձն առիր և մենք ալ կը յօժարինք»:

0.



ԻԱԲՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊԷ Ի Կ. ՊԼՈՒՍ)



(Շար.)

Եւ երկու վայրկեանէն սպասաւորը կե-
րակուրներն ու հացերնին կը բերէր:

— Աս ի՞նչ պիչիմ հաց է, Մաթոս
պէ՛կ, ըսաւ Աստիւր աղա. զոննա խմոր չունի:

— Էֆէնտրմ, աս տեղի հացին ալիւրն
ալ պիրինճի նէվէն ըլլալուն, ճերմակի կու
չալէ:

— Դախաթ, բարով եւմէք մի եղեր է
էշկիւլին:

— Հիւրըմինք է. ծօ՛ մէնչո՛ւկ, շա-
րապ կէթիւր:

— Տիօ մափոօ...

Անգիէն ձայն մը — Բայի՛:

— Աղա, անդին հէրիֆը ի՞նչ միւճիպով
վայ կրտէ:

— Ճիվերս 'ի վար, կուզէ վայ ըսէ
կուզէ բայ, հըմայեկս թօխամի անինք, նը-
շանգ շնորհաւոր ըլլնի, պիլա քէտէր՝ թա-
մամին հասցնէ:

— Ըմմէն. անուշ կըլլեցիր:

— Կենդանի մունաս,

— Քեզի բան մի ըսի՞մ, աս գինին
բէք պայվական է:

— Մէնչո՛ւկ, շունլարը տօլտուր:

— Ագօմա տիօ մափոօ,

— Բայի՛ տիօ մափոօ,

— Պաշկա եւմէք տէ կէթիւր պիզէ:

— 'Նէ՛ իսթէոսինիզ:

— Մէտէթ ի՞նչ կուզի, աղա՛:

— Սալորով միս վա՞ր մի:

— Օյլէ սէյլէն եօգ տէտիք պուռտա:

— Կերած ապիւրին կու հայի՞ս մի,
մուշթէրին ուղածը չի բերեր տը՝ իրինը
առաջ կու բուշէ:

— Էշկիւլիւտէն վա՞ր մի:

— Վար. միա ֆէգրասա՛տա, ո՛հն նէ՛
իսթէոսին հաճի ահա:

— Պանա տա պիր բարչա՛ զարդա-
վաթլու կէթիւր:

— Միա ըսթիֆաթօ՛:

— Ամէ՛սոս...

Նոյն միջոցին տեսարանը կը փոխուէր.
ասոնց սեղանին դիմացը դրուած ուրիշ սե-
ղանի մը առջև կուգար կը նստէր Պ Պատ-
րիկ, որ այն օրը Ղաւաթիոյ կողմը անցնե-
լով, Անգղիոյ նամակատունը նամակ մը յանձ-
նելէ ետքը, ճաշելու համար նոյն ճաշարանը
մտեր էր:

Աստիւր աղա զայն տեսնելուն պէս
պուռաց:

— Վա՛յ Պատկեր աղա, բարի եկիք.
հաղար բարի. քէրէմ ու հիմմէթ արէք վե
սանկս քովերնիս թէշրիֆ արէք:

Պատրիկ այս հրաւերը ընդունելով, ա-
նոնց քով գնաց նստաւ ու իրեն համար պը-
նակ մը կերակուր ապսպրեց:

— Էֆէնտրմ, ըսաւ Աստիւր, աղա,
ծառայ եիմ՝ օղորմութեանը, Աստուածպե-
տականութեան մուտտը կայ աս մատտէին
մէջ. պէլի, հըմայեկս մեղաւորս թէքմիլ ի-
թիմատ հասըլ արի, էրկինքէն կու բունտու-
սէանք՝ գետինէն գուտանք,

— Ի՛նչպէս, հարցուց Պատրիկ, սկը-
սելով ճաշել:

— Էրեկի Միհրան աղային տեօվլէթ-
խանէին մէջ աս պէնտէներնիւս եղած զա-
պուլիյէթէն տէրէճէսիւզ մէմնին ու մէս-
րիւր մնացանք վէ գիշերս թաթոս էմմիւին
հետ խարար տուանք ուր՝ Պատկեր աղային
հետ մէշվերէթ մի անինք՝ ճէմիյէթին սա-
հաթ մի էռաջ իճրա ընելուն խափլ ու խա-
րարը տանք:

— Շատ աղէկ:

— Ծօ՛, մէնչուկ, պիզէ շարապ կէթիւր:

— Կէլիյօ՛ր:

Գաւաթները պարպուելէ ետքը Պատ-
րիկի հրամանաւ նորէն լեցուեցան:

— Մենք կըսինք ուր, նուրու չէշմէի

մէջ ետլու պոյին տիւն մի իսթիճար ընելէ վէ թէճէմիլէթը տէօշէմիշ ընելէ սըղրա վարդափառի գիմացի կիրակին հարսնիքը իճ-բա անինք :

— Աղէկ կըսէք, սակայն պատճառներ կան, որոնք արգելք կըլլան մեզի հարսնիքը շուտ ընելու :

— Այդ պատճառները իմին կէճէլիք քիւլահիս հասկըցուր, պարոն Պատկեր, ըսաւ Աստիւր աղա քիչ մը բարկացած, որուն գըլուիւր գինիին ղորութնէն սկսեր էր դառնալ :

— Բայց պիտի համոզուիք թէ իրաւացի են այս պատճառները :

— Ասոր պէյնամաղ էօղիւրիւ կէլին վարդափառի դէմու կիրակին ճէմիլէթին տըլլի. մեղաւորս ալ կնքահար տըլլիմ, գոչեց Մաթոս աղա, որուն դըլուին ալ գինիին ղորութնէն սկսեր էր դառնալ :

— Ուրեմն ի՞նչպէս խօսք հասկցնելու ձեզի :

— Կօնէ մէյմէկ հաստ տահա տունկինք ու՛ քեզի մուֆասսալէն իֆատէ անիմ. ծօ՛, մէնչուկ, շունլարը տօլտուր :

Գաւաթները նորէն լեցուեցան ու պարպուեցան :

— Ես քեզի էւջի օրէն Եէնի ճամիի խէյֆէն նստեցանք նը՝ արդ ու պէյան արի ուր՝ մենք Ակնցի եինք, չենք խաբուիր, խօնթօ խօրօնթօ չենք կուլլիք :

— Բայց ձեզի ո՞վ կը խաբէ կոր :

— Քէրէմ արէ ուր ըսիմ, հիտտէթդ թող խապարմիշ չըլնի. վարդափառի դէմու կիրակին ճէմիլէթը կուզինք, վէսէլամ :

— Բերանդ եիմ՝ պարեր աղա, ուր քէք խայտէլի կու խօրաթիս, սիմ... սիմ... ըսելնուս իսէ՛ սիմաոն կըսինք մէջէն կեղնինք :

— Բայց մտիկ ըրէք որ ես ալ պատասխանեմ, 91 օրէն ձեզի ունեցած 100 ոսկի պարտքերնիս վճարելէ ետքը կրնանք օրիորդին օժիտը պատրաստել :

— Ըսել է ուր՝ աս տէյին սէնէթին էնկէլ կուլլի :

— Անանկ չէ՞ մի ես՝. ահա ասոր համար կըսենք թէ պէպ ՚ի Ս. Յակոբ լնենք հարսնիքը :

— Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, աստ պօմպակը էօնկըճէպ հանէ՛, պուաց Աստիւր աղա, ա՛լ լաւ մը գըլուիւր տաքցած ըլլալէն՝ ձեռքը սեղանին զարնելով, էկէր ուր 100 նիրանոց ադ տօխտն պիր կիւն վատէլի սէնէթին սէպէպովը մեր ճէմիլէթը տի ուշացնիք՝ ես ան սէննթին մէջը կանիծիմ, Միհրան աղա՝ յիս հիյպէ վէ քիւլիւք հանուսին հըմար ֆէտա՛ կանիմ :

— Սակայն...

— Սանքի ըսել կուզիմ՝ ուր՝ կու պատուտիմ վէ թօնիրը կու նետիմ, ալ ի՛շ տի ըսես :

— Հայ հայ, կու պատուինք :

Պատրիկ սկսաւ քահ քահ հիծաղիլ :

— Էկէր չի նետիմ իսէ՛ ալէմ ախ՝ շարք պետերիւս վրայ նուստած ըլլի :

Ու բարկութեամբ, թղթապանակէն հանեց 91 օրէն վճարելի մուրհակը և պատուտելով՝ կտորները ոտքին տակն առաւ :

— Ասոր ի՛շ տի ըսիս Պատկեր աղա, կէնէ մեր խօսքին սէմմ ու իթիպար չընելով տի խնդա՞ս մեր վրայ :

Անկարելի է նկարագրել Պատրիկի ապշուածիւնը. պատառաքողը ձեռքէն ինկաւ ու բերանը բաց մնաց,

— Բամմանքդ Ակնցիները չես ճանչնար. էնոնց մէջէն էլած հովարտան ըսթընպօլցիներոն մէջ նէ՛ կէզէր...

— Հըմայեկս ի՞նչ էօղիւր մի պէյան տի անիս :

— Ըսելիք մը չունիմ, պատասխանեց Պատրիկ լըջօրէն, մինակ ձեր յայտնած փափաղը Միհրան աղային իմացելով՝ ժամ առաջ հարսնիքին պատրաստութիւնը պիտի տեսնենք :

— Հա՛ շէյլէ, վաղն պուտիւ մենք ալ Մաթոս էմիլիին հետ եալուն տիւն մի տի բռնինք :

Պատրիկ, Աստիւր աղայի գինովութենէն

ապագային մէջ բաղուելիք օգուտները մտաբերելով՝ ոտքը գետնէն կտրեցաւ, ու այն վայրկեանէն որոշեց իր յառաջանալիք ճամբուն յասակագիծը փոխել: Ճաշարանին սպասաւորը կանչելով թէ Ակնցիներուն և թէ իր պարտօր վճարելէ ետքը տեսնելով որ երկու ընկերք լաւ մը դինովցած՝ կարողութիւն չունին քալելու, կառք մը բերել տրւաւ ու զանոնք մինչև Գուրու-չէշմէ տուններն տարաւ ձգեց եւ միենոյն կառքով վերադարձաւ ՚ի Պոլիս:

(Շար.)

ՆՈՐ ԱԿՈՌԻՆ Ի Փ.

Ակորի մեծ կարասին ի փ. . . են կազմեմ, Աժեմ չաժեմ խօսք մէկ ըրած ժողովք են Տոն կողմեր.

Այո՛, այո՛, ժողովք են Տոն կազմեր:

Սաստիկ է վէճ, մեծ է խնդիր զոր Տոն տեղ կը խորհին, թէ ինչ կերպով դարման մ'ըլլայ սա խեղճ վարդապետին:

Այո՛, այո՛, սա խեղճ վարդապետին:

Մէկն այս կըսէ, մէկն այն կըսէ կը վերջանայ խնդիր, Խուռամայով ժողովք ընել կըլլայ վերջին վճիռ:

Այո՛, այո՛, կըլլայ վերջին վճիռ:

Թէ խուռաման և կամ Փառեան լեցունեն զրպան:

Վարդապետը չի կշտանար, դեռ կուզէ խիստ շատ բան:

Այո՛, այո՛, դեռ կուզէ խիստ շատ բան:

Այսպէս մեզի ամեն ատեն արեւներ կը ծագին,

Լագրաֆ իլէ կէշեր էօմրիւ զափալլը լէյլէյին:

Այո՛, այո՛, զափալլը լէյլէյին:

ՊԻՇԱԿ



ԿԻՆԸ ԿՈՐՄՆՑՈՒՑԱԾ

Անցեալ ուրբաթ օրը 40 տարեկանի մօտ մարդ մը ձեռքը ճիզի մը խկուռի ձուկ բռնած, տեղույս Աղբատախնամի ժողովատեղին կը մտնէ:

— Բարեւ ձեզ աղաներ:

— Աստուծոյ բարին:

— Ես Սօֆիանէն կուգամ կոր. քանի մը ամիսներէ ՚ի վեր Տոն կը դառնուէի. Տիմա վերադարձայ, բայց չեմ գիտեր թէ կինս ո՞ւր է. հաճեցէք իմացնել ինձ անոր հասցէն:

Աղբատախնամի անդամները այս արտառոց առաջարկէն զարմացած՝ իրարու երես կը նային ու վերջապէս կիմացնեն թէ, իրենք մահալլէ մխրատի չեն:

Մարդը, որ կերելի թէ Աղբատախնամի ժողովատեղին կնիկներու տէրօգիթօ կարծելու չափ տխմար մը եղած ըլլալու է, յաջորդ օրը նորէն կը ներկայանայ, «Պարոններ, կնիկս դատք, կնիկս կուզեմ» ըսելով:

Ու այս անգամ քիչ մը յանդիմանութեամբ կը ճամբուի:

Տեսնողներ կան թէ, շուկան, խանի մը գաւթին պատէն վար 4—5 օր ճիզի մը խկուռիին կախուած մնացեր է:

Բոժ — Աստուած շատ քաշել չի տայ:

ՀԱՐՑՈՒՄ

Ա. Գ. Վ. Հ. Ի ֆ. . . — Մեր Մայր-Աթոռը բնագատող կաթովիկ տնձնաւորութեան մը համար իրա՞ն է որ դուք «100 Լուսաւորչականի չեմ փոխեր» ըսած ըլլա՞ք: Ընդ փոյթ պատասխանեցէք:

ՄԱՐԴ ԹԱՆՁՆԱՐԱՐԵԼՈՒ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՄԸ

— Կաղաչեմ, կրնա՞ք ըսել ինձ թէ
ինչ տեսակ մարդ է սա ձեր դրացին:

— Աղէկ մարդ է... բայց ինձի
մի հարցունք:

— Խօսքին կը հաւատացուի՞:

— Կը հաւատացուի... բայց մի
ստիպեր զիս որ խօսիմ անոր վրայ:

— Վստահելի՞ մարդ է:

— Վստահելի է... պատասխանա-
տուութիւն չեմ առներ վըրաս:

— Ինչո՞ւ:

— Խօսել մի տար զիս:

— Խաբեբայ է:

— Ես մարդ աւրելու բնութիւն
չունիմ... ի՞նչուս պէտք իմին... բարի
մարդ է, վէսէլամ:

— Հետը գործ կրնա՞մ ընել:

— Ձեր գիտնալիք բանն է... այն
մարդը իմ բարեկամն է... թող որ
բարեկամն չըլլար ալ նէ՝ ես սովորու-
թիւն չունիմ մարդու ետեւէն խօսելու:
Անոր ըրածները բոլոր աշխարհք գիտէ
արդէն, քանի քանի հոգիներու հետ
ընկեր եղաւ ու փաստ տուաւ... բայց
ինչուս պէտք իմին:

— Ըսել է որ զգուշանամ,

— Քուկին գործդ դուն գիտես.
աղբար, այդ մարդուն սաակ տուի՞ր
մի, գնաց, ա՛լ չես կրնար ետ առնել...
բայց ինձմէ իմացած մի՛ ըլլար... չեմ
ուզեր ես մարդ աւրել... բարի մարդ
է, բարի:

— Ընկեր ըլլամ հետը:

— Դուն գիտես... պաթմիչ ըլլալ
կուզես նէ՛ եղիր... կը ցաւիմ որ զիս
խօսելու կստիպես կոր... աղէկ մարդ է,
աղբար, աղէկ... ես կը սիրեմ ան
մարդը...

— Շնորհակալ եմ ձեր տեղեկու-
թիւններէն:

— Պապա մարդ է, պապա, անանկ
անուշ կերպով կը խաբէ սր կը զարմա-
նաս... այսու ամենայնիւ ինչո՞ւս պէտք
իմին... չեմ ախորժիր մարդ բամբա-
սելէ, անանկ չէ՞ մի...


— Անանկ է, շնորհակալ եմ:
Պ. Յ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Ա. Զարպհանէլեան

ՎԱՌՆԱ

Կը վաճառէ Պոլիսի, Թիֆլիսի եւ
Վիեննայի մէջ հրատարակուած հայերէն
դպրոցական եւ պատմական գիրքեր,
գետնի եւ վաճառումն ամեն տեսակ
նամակադրոշմերու. նաեւ դպրոցական
պիտոյքներ: Բաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին:



Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց զը-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով,
դիմել մեր խմբագրութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԲՐԻՅ ՏՂԱՅՈՅ

ԳԻՆ 80 ՄԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,
Ձրդ. թաղ. թիւ 1104:

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԳԻՍԻ

Այցետոմն, հասցետոմն. նամակա-
գլուխ, հրաւիրատոմն, բարենիշ, տոմ-
սակ, հայլն հայլն թէ՛ պարզ և թէ՛
սակեղօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուին:
Գին գոհացուցիչ: Դիմել հայերի խըմ-
բագրութեան:

Վաչրկենական Տպագրութիւն

ՀԱՅԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր.ի կը տպագրուի և ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմնի գոր-
ծածութեան հրահանգը պարունակոր տէտրա-
մը, որուն կողքին վրայ այցետոմնին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիմ-
յաւանարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պոպկարական 5, 10 և 15 սանդիմնոց նա-
մակագրօ՞ւմ կ'ընդունուի: Կանխիկ:

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

և Չորաբան

(ՊՈՒԼՊԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆՉՈՒՓ

Վառնա 5րդ թաղ Ելտըլ թապիս

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և
նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛
պարզ ջուրով գործող մեքենաներ, նաև շո-
գեմակոյղներ. ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթայ գործիքներ, գրամական
գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէն-
ներ, տեսակ տեսակ ջրհաններ և այլն և այլն
կը պատրաստուին: Պատ. Յաճախորդ միշտ
գոհ մնացած են այն գործարանի շինու-
թիւններէն:

ԿԱՐԱՊԵՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Եւ

ՅԱԿՈԲ ՄՈՍԿՈՅԵԱՆ

Փորագրիչք

Ուլիցա Բառուշէվա, թիւ 1339

Վառնա

Նրբաճաշակ փորագրութիւններ թէ՛
տաախի և թէ՛ մետաղի վրայ, գոթիկ
գրերով ամեն լեզուէ այցաքարտեր, ա-
սոնցմէ զատ անձնական և վաճառա-
կանական կնիքներ կը պատրաստեն:
Յաճախորդք միշտ գոհ կը մնան փորագ-
րութեանց մաքրութենէն և գիներու
չափաւորութենէն: Քաղաքներէ ըլլալիք
յանձնարարութիւնք փութով կը կատար-
ուին:

ԷՐԲԷՅԻՆ ՖԷՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵՒՆՏԻ

Գըշ կէճէլէրինէ մախսուս զայլի կիւ-
լիւ նճլի վէ էյլէնճէլի իշպու գոմէտի 32 սա-
ի ֆէտէն խպարէթ օլուպ, հրաքաթի էրմէ-
նիճէ վէ լիսանը թիւըքճէ օլարագ Վարնա
թիւթիւնճիւ ախքըտանլարընտա 30 սանթիմ
ֆիաթլէ սաթըլմագտա տըր: Թաշալարտան
խթէյէնլէր եալընըղ 30 սանթիմիք բօսթա
լուլը գիրտէ մուհարրէր նամըմա կէօնտէր-
մէլի տիրլէր:

Մ. ԽԱՉԻԿԵԱՆ, 2 հմի Ուլաթ, 1104

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Պունտան պէօյլէ սաիր էյլէնճէլի վէ ֆա-
խտէլի գոմէտիլէր տախի բէյտէրէյ նէշր օ-
լունաճաղը պէյան օլունըր:

ՃԱՇԱՐԱՆ ԸՐԱԳԱԾ

Այն ճաշարանը այս անգամ ճիար Գէորգ
Փափաղեանի տնօրէնութեանը յանձնուած է,
ուր ըստ առաջնոյն կը գտնուին համալիմ
կերակուրներ: Պատուարժան յաճախորդք
խիստ գոհ պիտի մնան թէ կերակուրներէն և
թէ գիներու անմրցելի աժանութենէն:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Печатница „Взаимность“—Варна.